ԶԵԿՈՒՅՑ

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ. ԱՌԿԱ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Պատրաստված է Հայաստան-Մփյուռք խորհրդաժողովի համար

22-23 սեպտեմբերի, 1999թ.
ք. Երևան



I. ՆՊԱՏԱԿԸ

Այս զեկույցի նպատակն է վերազննել ներկայումս սփյուռքում առկա քաղաքական քարոզչական կարողությունները և ուղիներ առաջադրել, որպեսզի Սփյուռքը, Հայաստանն ու Ղարաբաղը միասին աշխատեն այս կարողություններն ավելացնելու ուղղությամբ՝ ուժեղացնելով գործող քարոզչական կազմակերպությունները և խթանելով նրանց միջև ավելի սերտ երկխոսություն, խորհրդատվություն և համակարգում:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սփյուռքում հայկական քաղաքական քարոզչությունը պատմության ողջ ընթացքում հիմնականում արդյունքն է եղել Սփյուռքի քաղաքական կուսակցությունների աշխատանքի և զորացել է Հայ դատի գաղափարով տոգորված անհատների ու հաստատությունների գործունեությամբ, որոնք գործել են հանուն իրենց հայրենիքի, իրենց սփյուռքյան համայնքների ու իրենց ազգային նկրտումների: Երկրաշարժից հետո, որին հետևեց Հայաստանի և Ղարաբաղի անկախությունը, զգալի քանակով նոր կազմակերպություններ ու անհատներ են միացել ընդհանուր քարոզչական աշխատանքներին, որոնցից շատերի հիմնական նպատակն է Հայաստանի ու Ղարաբաղի ժողովուրդների առջև ծառացած խնդիրներին անդրադառնալը:

Սույն զեկույցի հեղինակները ենթադրում են, որ համընդհանուր ըմբռնում կա թե՛ հայրենիքում, և թե՛ Սփյուռքում քարոզչության անհրաժեշտության ու նշանակության վերաբերյալ՝ անկախ նրանից, թե դա իրականացնում են Հայաստանն ու Ղարաբաղը միջազգային ասպարեզում, թե՝ աջակից սփյուռքյան կազմակերպություններն ու անհատ գործիչները:

Հայաստանի ու Ղարաբաղի քարոզչությամբ զբաղվողները, մրցելով հարյուրավոր, եթե ոչ՝ հազարավոր այլ քարոզչական ցանցերի հետ, իրենց նպատակային գործունեությամբ հետամուտ են որոշակի պետություններից, տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպություններից որոշակի գործողությունների ու քաղաքականության իրականացման: Լարված մրցակցություն է գնում, և պարտվողներն իրենց թվաքանակով զգալիորեն գերազանցում են հաղթողներին: Անկախությունից ի վեր, այսպես կոչված «հայկական լոբբին» կարևոր օղակ է եղել, որը սատարել է Հայաստանի ու Ղարաբաղի ժողովուրդներին, օժանդակել երկուսի անվտանգությանը և ներկայացրել Կովկասը՝ որպես հատուկ միջազգային ուշադրության արժանի տարածաշրջանի: Անկասկած, Հայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի ջատագովների համակարգված ջանքերը եղել են և կշարունակեն գործոն լինել՝ կարևորագույն պետությունների և միջազգային հաստատությունների որոշման կայացման գործընթացներում: Ի հաստատումն այս պնդման, բավական է միայն անդրադառնալ մեր հակառակորդների հայտարարություններին, որոնցում պարբերաբար աղաղակներ են հնչում հայկական լոբբիի ենթադրյալ հզորության մասին:

Այնուհանդերձ, այս փաստաթղթի ընդհանուր տեսանկյունն այն է, որ մենք, որպես իրական ջատագովներ, չենք կարող բավարարված լինել: Մենք պետք է զննենք ու գնահատենք մեր համաշխարհային քարոզչական ցանցի յուրաքանչյուր մասնիկն ու

գործընթացը: Հաշվի առնելով ուշադրության համար տարվող ընդհանուր մրցակցությունը և մեր հակառակորդների հզորությունը, կարծում ենք, որ ներկայումս գործող մեր քարոզչական շրջանակները պատշաճ կերպով կազմակերպված չեն և չափազանց փոքր են:

Ակնհայտը կրկնած լինելով հանդերձ, հարկ է նշել հատկյալը:

- Սփյուռքում չափազանց քիչ ջատագովներ կան: Միջազգային, թե՝ ազգային, համախոհ, թե՝ ոչ համախոհ, հայկական, թե՝ օտար հաստատությունների ու անհատների ընդհանուր թիվը, որոնք ի շահս Հայաստանի ու Ղարաբաղի տարվող քարոզչական գործունեությամբ են զբաղվում կամ հետաքրքված են դրանով, ընդհանուր ներուժի միայն մի մասն են կազմում: Անխուսափելիորեն ներկա քարոզչական շրջանակները ստիպված են իրենց ջանքերը դասակարգել ըստ առաջնայնությունների, որպեսզի մի քանի առանցքային խնդիրներում հաջողության հասնեն: Այս շրջանակները հաճախ ստիպված են լինում իրենց սահմանափակ միջոցները տրամադրել հասնելու նրան, ինչը հնարավոր է, այլ ոչ թե՝ ինչ ցանկալի է: Միայն ավելի մեծ մարդկային ու նյութական միջոցների առկայության դեպքում հնարավոր կլինի ընդունել ավելի համապարփակ քարոզչական օրակարգ:

- Յուրաքանչյուր երկրում ներկայումս գործող և, առավել ևս, տարածաշրջանային կամ համասփյուռքյան քարոզչական ցանկացած շրջանակներ բավականաչափ ժամանակ չեն տրամադրում հաղորդակցվելու, խորհրդակցելու և համագործակցելու համար: Քարոզչությամբ զբաղվող կազմակերպություններում քարոզչության հաղթանակը ապահովելուն, պահանջվող գումարները հայթայթելուն և իրենց ընտրողների հետ շփվելուն տրամադրված ժամանակը գործնականում կլանում է ողջ առկա մարդկային ու նյութական պաշարները: Անհատ ջատագովները, որոնք գործ ունեն այս բազմազան մասնագիտացված քարոզչական շրջանակների մեկ կամ ավելի տարրերի հետ, իրենց մասնագիտական գործունեության բերումով, շատ քիչ ազատ ժամանակ են ունենում քարոզչության և, բնականաբար, շատ ավելի պակաս ժամանակ՝ համակարգման համար: Այս պայմաններում Սփյուռքում իրականացվող քարոզչությունը հրատապ և կարճաժամկետ խնդիրների վրա է կենտրոնանում՝ ի պատասխան Հայաստանի և Ղարաբաղի առաջնային պահանջների:

- Հայաստանի արտասահմանյան ներկայացուցչությունների, կամ, մեկ կամ ավելի մասնագիտացված քարոզչական կազմակերպությունների նախաձեռնությամբ, ժամանակ-առ-ժամանակ համահայկական նպատակային քննարկումներ են նախաձեռնվել և գործողություններ ձեռնարկվել: Ըստ մեր տեղեկությունների, նման քննարկումներում և նախաձեռնություններում չի ընդգրկվել քարոզչությամբ զբաղվողների ողջ սպեկտրը: Անցյալում գործադրված այս ջանքերի արդյունքում չեն ստեղծվել նաև մշտական և արդյունավետ համահայկական քարոզչական հաստատություններ, որոնք կհամախմբեին ու կհամակարգեին բոլոր շահագրգիռ հաստատություններին ու անհատներին ազգային, տարածաշրջանային և Սփյուռքի մակարդակներով: Ընդհանուր առմամբ, համընդհանուր նպատակներին ծառայող ամենատարբեր հովանոցային կազմակերպություններ ստեղծելու և այն պահպանելու նախորդ և ներկա ջանքերը հաջողությամբ չեն պսակվել:

- Հայաստանի և Ղարաբաղի կառավարությունների համար, որոնք խիստ զբաղված են պետության կառուցման, անվտանգության ապահովման և ներկայացուցչականության խնդիրներով, գոյություն ունեցող սփյուռքյան քարոզչական ցանցի հետ հաղորդակցումն ու համագործակցությունը բավարար չափով առաջնային չեն եղել: Կառավարությունը նաև հնարավորություն չի ունեցել լիովին ճանաչելու և գնահատելու առկա ջատագովների ողջ սպեկտրը, խրախուսելու քարոզչական շրջանակների աճը և, արտասահմանում իր ներկայացուցչությունների միջոցով, դառնալու համակարգիչ օղակ՝ հովանոցային կազմակերպության բացակայության պայմաններում:

- Հայաստանի և Ղարաբաղի ներքին ու արտաքին քաղաքական հայեցակարգերի և նպատակների մասին տեղեկատվության պակասը բացասաբար է անդրադառնում Սփյուռքի քարոզչական շրջանակների կարողության վրա՝ ավելի ուղղորդված օգտագործելու իր սահմանափակ միջոցները: Նպատակային գործունեություն ծավալելիս, քարոզչական շրջանակների համար շատ օգտակար կլիներ, եթե իմանար, թե որոնք են Հայաստանի ու Ղարաբաղի նպատակները՝ տնտեսական զարգացման, անվտանգության ապահովման, ժողովրդավարության հաստատման ծրագրերը և երկկողմ ու բազմակողմ հարաբերություններն իրականացնելիս: Եվ հակառակը, Հայաստանի ու Ղարաբաղի կառավարությունների համար օգտակար կլիներ, եթե իմանային Սփյուռքում գործող յուրաքանչյուր քարոզչական տարրի առանձնակի ու իրական հնարավորությունները և յուրաքանչյուր միավորի քարոզչական օրակարգը:

- Մեր տեղական կազմակերպությունները, պետք է նշել, մեծամասամբ խիստ հակադրության մեջ են գտնվում այն քարոզչական շահերի հետ, որոնց առնչվում են իրենց գործունեության ընթացքում: Ժամանակակից քաղաքական քարոզչությունը գլխավորապես հիմնվում է գլխավոր քաղաքական կենտրոններում գործող մասնագիտացված կամ վարձու կազմակերպությունների փորձառու ներուժի վրա: Թուրքիայի, Ադրբեջանի, նավթագազային լոբբիները և շատ ու շատ այլոք, որոնց շահերին ենք բախվում, նման կազմակերպությունների հայտնի հաճախորդներն են: Մեր խնդիրների բարդացմանը զուգահեռ, մեր համաժողովրդական ջանքերը ավելի մեծ ընդդիմության են հանդիպում այս հաստատությունների կողմից:

- Սփյուռքը հայ ժողովրդի կենսական մասնիկներից մեկն է: Այն ռազմավարական հարստություն է: Նրա արժանիքներն ու թուլությունները ազդեցություն են թողնում մեր ազգային շահերի վրա: Այդ իսկ պատճառով, հրամայական է դարձել Սփյուռքի քաղաքական քարոզչական հնարավորությունների ուշադիր ուսումնասիրությունը՝ ապագայի մեր ուղին գծելիս:

Ելնելով վերոնշյալից, մենք համառոտ կանդրադառնանք քարոզչության ներկա վիճակին և առաջարկություններ կներկայացնենք, թե ինչպես կարող ենք համատեղ աշխատել մեր ողջ՝ Հայաստանի, Ղարաբաղի ու Սփյուռքի քարոզչական ցանցը հզորացնելու ուղղությամբ:

III. Ո՞Վ Է ՋԱՏԱԳՈՎԸ

Ջատագով բառը այս փաստաթղթում սահմանվում է որպես հաստատություն կամ անհատ, որն օժանդակում է Հայաստանի ու Ղարաբաղի կարիքների ու քաղաքականության առաջադրմանը ցանկացած հասարակական քաղաքական գործչի մոտ՝ այնպիսի ենթատեքստում, որը կարևոր կամ արդյունավետ է: Այս իմաստով, սփյուռքյան քարոզչությունը զարգացող իրականություն է: Սփյուռքի յուրաքանչյուր համայնք, ինչպես նաև անհատներ այնպիսի շրջաններում, որտեղ չկա կազմակերպված համայնք, իրենց մասնակցությունն են բերում այս գործընթացին: Ինչպես արդեն նշվեց, ջատագովների թիվը չափազանց փոքր է: Սփյուռքի, Հայաստանի և Ղարաբաղի համատեղ օրակարգը պիտի դառնա ներկա քարոզչական շրջանակների հզորացումը՝ շեշտը դնելով այն կազմակերպությունների վրա, որոնց հիմնական առաքելությունը քարոզչությունն է, ինչպես նաև քարոզչությամբ զբաղվող անհատների և հաստատությունների ընդհանուր թվի ավելացումը:

Ա. *Մասնագիտացված քարոզչական կազմակերպություններ:* Միջազգային մակարդակով՝ «Հայ դատի» հանձնախումբը և ազգային մակարդակով՝ Ամերիկայի հայկական համագումարը միակ կազմակերպություններն են՝ իրենց գործադիր մարմիններով, գրասենյակներով և վճարովի մասնագետ աշխատակազմերով, որոնց հիմնական գործունեությունը քարոզչությունն է: Ի լրումն այս կազմակերպությունների, կան մի ամբողջ շարք քարոզչական ուղղվածությամբ, քաղաքական հարումներով ու անկախ կազմակերպություններ, որոնք նույնպես կարևոր դեր են խաղում համընդհանուր քարոզչական աշխատանքներում:

Բ. *Հայկական ոչ-քարոզչական կազմակերպություններ*: Այլ հայկական հաստատություններ կարող են զգալիորեն ավելացնել քարոզչական շրջանակների կողմից ներկայումս գործադրվող ջանքերը: Նվազագույնը, յուրաքանչյուր հայկական կազմակերպության պետք է կոչ անել մասնակցելու այս աշխատանքներին: Սփյուռքում թյուրընկալում է տարածված, որ քարոզչությամբ իրավասու են զբաղվելու միայն իրենց այս գործին նվիրած մասնագիտացված հայկական կազմակերպությունները: Այս ընկալումը պետք է փոխվի Հայաստանի, Ղարաբաղի և մասնագիտացված քարոզչական կազմակերպությունների ջանքերով՝ հայկական բոլոր կազմակերպությունների ակտիվ ներգրավմամբ ու վերջինիս մշտական խթանմամբ: Ընդունելով, որ կրոնական, բարեգործական, հայրենակցական, կրթական և այլ ոչ-քարոզչական հայկական կազմակերպությունները չեն կարող քարոզչությունը դարձնել գործունեության իրենց հիմնական ուղղությունը, այնուհանդերձ յուրաքանչյուր գործադրված ջանքի հանրագումարային ազդեցությունը ավելի զգալի կլինի նրանց մասնակցությամբ:

Գ. *Օտար դաշնակիցներ:* Կարևոր օտար կազմակերպությունները և անհատները պատմականորեն ներգրավված են եղել մեր համատեղ ջանքերում՝ համընկնող շահերից ելնելով, կամ որպես դաշինքի անդամներ: Հայաստանի և Ղարաբաղի իշխանությունների, ինչպես նաև Սփյուռքի կողմից ավելի մեծ ուշադրության արժանացնելու և աջակցության դեպքում, այս օտար կազմակերպությունները կարող են ավելի պիտանի լինել: Չներգրավված օտար կազմակերպությունների թիվն անհամեմատ ավելի մեծ է: Իրենց առաքելության բերումով, կամ նախադեպի առկայությամբ, այս կազմակերպություններին կարելի է խրախուսել անդրադառնալու Հայաստանի և Ղարաբաղի կարիքներին, հեռանկարներին, կամ ընդունելու նրանց վարած քաղաքականության որոշ ասպեկտները: Սփյուռքի, Հայաստանի և Ղարաբաղի

ընդհանուր օրակարգի կետերից պիտի լինի ներկայումս ներգրավված օտար կազմակերպություններին խթանելն ու աջակցելը և նորերի ներգրավմանը հասնելը:

Դ. *Հայ անհատներ՝ հասարակական քաղաքական գործչի դերում:* Ջատագովների թվի նպատակային ավելացման մեկ այլ ասպարեզ է այն հայ մասնագետների ներգրավումը, որոնք մասնագիտության բերումով ընդհանուր քարոզչական օրակարգին են հարում: Սփյուռքահայերը հայտնի են և ազդեցիկ՝ հայկական լոբբիի հզորացման նպատակին անմիջականորեն առնչվող մասնագիտական ոլորտներում: Իրենց մասնագիտական դիրքի և անդամակցության, և/կամ ներքին քաղաքականության մեջ իրենց ներգրավվածության բերումով, մի զգալի թվով սփյուռքահայեր կարող են միանալ քարոզչության գործին: Եթե ժամանակի ընթացքում մեծ թվով անդամագրվեն այս գործին, հայկական լոբբիի ուժն ու ազդեցությունը նշանակալիորեն կմեծանա:

Հայտնի, բարձրաստիճան հայ անհատներին հայաստանամետ և ղարաբաղամետ քարոզչական ջանքերում ներգրավելը պետք է լինի Հայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի քարոզչական կազմակերպությունների շարունակական առաքելությունը: Ներկա կամ նախկին ընտրովի կամ նշանակված պետական պաշտոնյաները, ընկերությունների ղեկավարները, ակադեմիական շրջանակների ներկայացուցիչները, պարբերական և հեռահաղորդվող մամուլի անվանի ներկայացուցիչները, օտար ոչ կառավարական հաստատությունների ղեկավարները, արվեստի գործիչները և անկախ քաղաքական գործիչները իրենցից անհատներ են ներկայացնում, որոնք ունեն զգալի ուժ և ազդեցություն իրենց մասնագիտական շրջանակներում և հասարաքաղաքական գործընթացներում: Նրանց կողմից հայաստանամետ և ղարաբաղամետ օրակարգի լիարժեք կամ մասամբ ընդունումը առ այսօր զգալի գործոն է եղել: Այս անհատներին ներգրավելը սովորաբար նուրբ գործընթաց է, երբ Հայաստանի, Ղարաբաղի կամ Սփյուռքի ջատագովը նախաձեռնում և պահպանում է հարաբերությունը՝ ընդունելով անհատի կողմից որոշված ներգրավվածության ձևն ու մակարդակը: *Ջատագովի տեսանկյունից, ցանկացած արդյունք մեծ արդյունք է:*

Ե. *Անհատ հայ ջատագովներ:* Այս անհատները ներկայացնում են Սփյուռքում հայկական քարոզչության համաժողովրդական հիմքը: Նրանք տեղերում ճնշում են իրականացնում, նյութական օժանդակություն ցույց տալիս, կազմակերպչական աշխատանքներ տանում տեղերում և ստեղծում տեղային դաշինքներ:

Զ. *Հայաստան և Ղարաբաղ:* Ցանկացած քննարկում, թե՝ «ո՞վ է ջատագով», կիսատ է առանց պետության, քաղաքական կուսակցությունների, արտաքին քաղաքական հաստատությունների, այլ տեղական ոչ կառավարական կազմակերպությունների և Հայաստանի ու Ղարաբաղի լրատվամիջոցների կենտրոնական դերի: Յուրաքանչյուր պետությունից, ուղղակիորեն կամ արտասահմանում իրենց պաշտոնական ներկայացուցչությունների միջոցով, պաշտոնական կամ ոչ պաշտոնական քարոզչություն է իրականացվում ամեն օր: Սփյուռքի ջատագովները պետք է ուշադիր հետևեն այս գործունեությանը՝ առկա կարիքներին, առաջնայնություններին, դիրքորոշումներին ու խնդիրներին համընթաց շարժվելու համար:

IV. ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ազգային, տարածաշրջանային, միջազգային հաստատությունների ու պետությունների մի ամբողջ ցուցակ գոյություն ունի, որոնք ուղղակիորեն ազդում են Հայաստանի ու Ղարաբաղի վրա: Անկասկած, Հայաստանում, Ղարաբաղում ու Սփյուռքում առկա քարոզչական կարողություններից վեր է այսօր արդյունավետորեն աշխատել քաղաքական որոշումներ կայացնողների ողջ համայնքի հետ: Եթե պետք է մեր կարողությունները արդյունավետորեն կիրառենք, պետք է Հայաստանի, Ղարաբաղի ու Սփյուռքի միջև խորհրդակցությունների միջոցով ընտրել առաջնայնություններ՝ ուշադիր քննության առնելով մեր քարոզչական նպատակները:

Ակնհայտ է այսօր, որ Ֆրանսիան, Ռուսաստանը, Միացյալ Նահանգները, ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն, եվրոպական կառույցները, ՆԱՏՕ-ի «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագիրը, Միջազգային արժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկը և ԱՊՀ-ն ամենակարևոր պետական ու միջպետական միավորներից են: Ենթադրաբար, Հայաստանի, Ղարաբաղի ու Սփյուռքի միմյանցից զատ ձևավորված քարոզչության օրակարգը պետք է իր ուշադրության կենտրոնում ունենա այս երկրներն ու կազմակերպությունները ներկայացնող քաղաքական գործիչներին:

Քարոզչության մեջ ակտիվորեն չընդգրկված մարդկանց համար պատկերավոր կլինի մի երկրի՝ Միացյալ Նահանգների օրինակը դիտելը: Հայաստանի ու Ղարաբաղի ընկերներն ԱՄՆ-ում պետք է միաժամանակ քարոզչության ենթարկեն գործադիր իշխանության բազմաթիվ բաժինները, նպատակային կոնգրեսական հանձնաժողովները, Կոնգրեսի անդամներին ու նրանց աշխատակազմերը, արտաքին քաղաքականության/ միջազգային հարաբերություններով զբաղվող գիտահետազոտական հաստատությունների հետ առնչվող ընտրովի թվով վերլուծաբաններին և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներին, ԱՄՆ-ի մամուլի ընտրովի աղբյուրները, որոնց մի մասը մոսկովյան գրասենյակներ ունի: Եթե ավելի ուշադիր զննենք ԱՄՆ-ի քաղաքական որոշումներ կայացնող համայնքի մեկ տարրը՝ Կոնգրեսի անդամին, ջատագովները պետք է լիովին գծանշեն այդ անձի մայր նահանգը կամ ընտրաշրջանը՝ ստեղծելով հայաստանամետ/ղարաբաղամետ ընտրողների, այդ նահանգում/շրջանում գործող հայկական հաստատությունների, ընտրվող պաշտոնյայի հետ սերտ հարաբերություններ պահպանող հայերի ու օտարների, և այն օտար ու ոչ կառավարական կազմակերպությունների տեղեկատվական բազան, որոնք աջակցում են մեր խնդիրներին: Համերկրային շրջանակներից դուրս, կարևոր աշխատանք է տարվում, ի թիվս այլոց, նահանգային ու տեղական իշխանություններում, դպրոցական խորհուրդներում, համալսարաններում ու գրադարաններում: Եվ վերջապես, այս տարրերը պետք է մասը դառնան մի հաղորդակցման ցանցի, որի վրա կարելի է հույս դնել՝ ընտրովի պաշտոնյաներին ժամանակին ու համոզիչ հայաստանամետ/ղարաբաղամետ դիրքորոշումներ հայտնելու համար:

Միացյալ Նահանգների օրինակը առաջարկվել էր ցույց տալու համապարփակ քարոզչական աշխատանքի բարդությունն ու ընդգրկումը, որտեղ «խաղի կանոնները» ձևակերպված են, երկարատև և համեմատաբար թափանցիկ: Հաշվի առնելով յուրաքանչյուր ազգային կամ տարածաշրջանային/միջազգային կառույցի խաղի կանոնների եզակիությունը, և տարածելով այն ազգային, տարածաշրջանային կամ սփյուռքյան մակարդակների վրա, մեր համատեղ խնդրի մեծությունը ավելի պարզ ու վիատեցնող է դառնում: Հարաճուն կերպով և ժամանակի ընթացքում մենք պետք է ստեղծենք յուրաքանչյուր քարոզչական նպատակակետի համապարփակ պատկերը.

ովքե՞ր են ուժերը, ո՞վ է որոշում կայացնում և ինպե՞ս, ո՞վ կարող է ազդել որոշում կայացնողների վրա, ի՞նչ ենք ուզում կառավարությունից կամ տվյալ կառույցից և ինչու՞: Էական է նաև նշել, որ սփյուռքի ջատագովները մասնավորապես պետք է հաշվի առնեն այն կառավարության/ կառույցի շահերը, որի համար քարոզում են: Հայաստանի ու Ղարաբաղի կարիքները, գործողությունները կամ ապագա քայլերը պետք է իրենց բացատրությունը գտնեն ֆրանսիական, ռուսական կամ ամերիկյան շահերի ենթատեքստում, կամ ԵԱՀԿ-ի, ԱՊՀ-ի կամ այլ տարածաշրջանային ու միջազգային կառույցի առաքելության կամ գործունեության կանոնների շրջանակում: Այս բոլոր միջավայրերում կարևոր բաղադրիչը մշատատև և երկարաժամկետ ներկայությունն է համապատասխան քաղաքական կենտրոններում: Լիովին գործող քարոզչական ցանց պետք է ձևավորել յուրաքանչյուր առաջնային երկրի և տարածաշրջանային/միջազգային հաստատության համար: Լիովին գործող ասելով ի նկատի ունենք, որ կլինեն բավարար քանակով ջատագովներ, որոնք կհամագործակցեն, որպեսզի հնարավոր ճշգրտությամբ և վստահությամբ կանխատեսեն, թե ինչ կարելի է ձեռք բերել արդյունքում: Բաղձալին կլնի, որ այս առանձին գործող քարոզչական ցանցերը կապվեն միմյանց հետ ողջ Սփյուռքով մեկ՝ միմյանց փոխանցելով քաղած դասերը, գործելակերպն ու նպատակները: Նմանապես, անհրաժեշտ է բարդ քարոզչական գործունեություն ծավալել այնպիսի տարաբնույթ միջավայրերում, ինչպիսիք են ՄԱԿ-ը, Եվրոպական միությունը, Մերձավոր Արևելքը, ԱՊՀ-ն և այլոք:

Ի լրումն քաղաքական որոշում կայացնողների, հարկ է ուշադրություն դարձնել նաև տպագիր և հեռահաղորդվող մամուլին: Հայաստանի ու Ղարաբաղի կառավարությունները պետք է ընդունեն ակտիվ մամլո քաղաքականություն՝ ընկալելի ձևերով և կանոնավոր կերպով ներկայացնելով օբյեկտիվ տեղեկատվությամբ հիմնավորված ապագա քայլերը և տեղեկացնելով ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող պետական միջոցառումների մասին: Սփյուռքի ջատագովները պետք է շարունակաբար ավելացնեն մամուլի հետ իրենց կապերը և զգալիորեն համալրեն Հայաստանի ու Ղարաբաղի մամուլի ջանքերը:

V. Ո՞Վ Է ՈՐՈՇՈՒՄ, ԻՆՉ ՔԱՐՈԶԵԼ

Հայաստանի ու Ղարաբաղի իշխանություններն են պատասխանատու իրենց օրակարգը մշակելու համար:

Սփյուռքի քարոզչական կազմակերպություններն էլ, իրենց հերթին, պարտավոր են իրենց առաջնայնությունները սահմանել՝ համաձայն իրենց կանոնների: Կարևոր է, որ որոշման կայացման գործընթացի այս անկախ բնույթը հստակ ու ակնհայտ լինի, որպեսզի խուսափեն որևէ բացասական իրավական կամ քաղաքական հետևանքներից, որոնք կարող են ծագել, եթե այն տպավորությունը ստեղծվի, թե նրանք գործում են որպես որևէ օտար կառավարության կամ կառույցի գործակալներ:

Հայաստանը, Ղարաբաղն ու Սփյուռքը պետք է ներգրավվեն եռակողմ ակտիվ խորհրդակցությունների գործընթացում՝ համատեղ գործողությունների ընդհանուր օրակարգ մշակելու համար: Այս օրակարգը կիրարկելիս, պետք է հաշվի առնել երկու կառավարությունների բազմատեսակ կարողություններն ու հասանելիության տարբերվող ծավալները, ինչպես նաև Սփյուռքի ջատագովների ողջ սպեկտրը: Այն դեպքերում, երբ տվյալ կուսակցության առանձին առաջնայնություններ չեն կարող

միահյուսվել ընդհանուր օրակարգին, պետք է քայլեր ձեռնարկվեն խաչաձևվող նպատակներով աշխատելուց խուսափելու համար:

VI. ԻՆՉ Է ՔԱՐՈԶՎՈՒՄ

Սփյուռքի ջատագովների կողմից քարոզվող հարցերի շրջանակը սահմանափակ է եղել, թեև զգալիորեն ընդարձակվել է Հայաստանի ու Ղարաբաղի անկախացումից հետո: Նրանք Հայաստանի ու Ղարաբաղի վրա ազդող առանցքային խնդիրներին առաջնայնորեն են անդրադարձել՝ հաշվի առնելով նրանց անմիջական ազդեցությունը մեր շահերի վրա: Մեր ընդհանուր քարոզչական օրակարգում ներկայումս գտնվող հարցերից են հետևյալը:

ա. *Հայկական եղեռնը.* հայկական եղեռնի համաշխարհային ճանաչումը՝ դրանից բխող խնդիրներով:

բ. *Պետական կառուցում* -- հրատապ օրակարգային հարց, որն ընդգրկում է հետևյալը. ազգային/միջազգային աջակցություն Ղարաբաղի դե ֆակտո անկախությանը, ղարաբաղյան հակամարտության արագ լուծում՝ Հայաստանի, Ադրբեջանի ու Ղարաբաղի միջև ուղղակի բանակցությունների միջոցով, ազգային/միջազգային աջակցություն Հայաստանում շուկայական տնտեսության զարգացման գործում, ազգային/միջազգային աջակցություն Հայաստանում և Ղարաբաղում շարունակվող տնտեսական վերափոխումներին և ժողովրդավարական հասարակության ձևավորմանն ու անվտանգությանը՝ մարդասիրական, տեխնիկական ու զարգացման աջակցության, ինչպես նաև ուղղակի արտասահմանյան ներդրումների միջոցով:

գ. *Հակառակորդի քարոզչությանը դիմագրավում.* դիմագրավել կառավարությունների, ազգային/միջազգային ընկերությունների, արտաքին քաղաքականությամբ/ միջազգային հարաբերություններով զբաղվող հաստատությունների ու մամուլի կողմից Հայաստանին, Ղարաբաղին ու Սփյուռքին վնասող թշնամական մեղադրանքները: Կարևոր խնդիր է այս գործում հնարավորություն չտալ հակառակորդներին թյուր կերպով ներկայացնել Հայաստանի ու Ղարաբաղի կողմից իրականացվող քաղաքականությունը և գործողությունները՝ բացատրելով ու մեկնաբանելով դրանք համապատասխան ենթատեքստում:

դ. *Ներքին օրակարգ:* Թեև անմիջական կամ ուղղակի օգուտ չունեն սրանից Հայաստանի ու Ղարաբաղի իշխանություններն ու ժողովուրդը, Սփյուռքի քարոզչական կազմակերպությունները միջոցներ են տրամադրում իրենց կազմակերպությունները հզորացնելու և իրենց ընտրողների համար առաջնային ազգային, տարածաշրջանային կամ տեղական խնդիրները լուծելու համար: Մեր կարծիքով, զգալի օգուտ ունի յուրաքանչյուր քարոզչական կազմակերպության չափն ու ուժը ավելացնելը: Այսպիսի աճը հնարավոր չի լինի, եթե մեր կազմակերպությունները նաև չանդրադառնան մեր համայնքների տեղական, տարածաշրջանային կամ ազգային մտահոգություններին: Սփյուռքը հստակորեն ընդունում է, որ պատմական այս եզակի ցանկալի ժամանակահատվածում առաջնայնությունը պետք է տրվի Հայաստանի ու Ղարաբաղի ժողովուրդներին: Այնուհանդերձ, որոշակի քարոզչական գործունեություն պետք է ծավալել մեր աջակիցների բանակը ստեղծելու և տեղական խնդիրները լուծելու համար: Ուղղակի կապ կա տեղական խմբերի ու հաստատությունների իրական

և ընկալվող հզորության և հանուն Հայաստանի ու Ղարաբաղի ժողովուրդների հաջողությամբ քարոզչական գործունեություն ծավալելու նրանց կարողության միջև: Տեղական, տարածաշրջանային կամ ազգային մակարդակներում ձեռք բերված հաջողությունները Հայաստանի ու Ղարաբաղի հետ անմիջական առնչություն չունեցող անհատներին ու հարցերն առաջադրելիս խթանում են հայկական լոբբիի և հայերի հեղինակությունը՝ որպես քաղաքական գործընթացներում արդյունավետ գործիչների: Մեր սփյուռքյան համայնքները գոյություն ունեն չորրորդ սերունդը և ավելին, և հստակորեն ընդգծվում է տեղական, տարածաշրջանային ու ազգային քաղաքականության մեջ ավելի մեծ ներգրավում՝ զանազան բնագավառների ավելի մեծ թվով ջատագովների մասնակցությամբ: Այս ցանկալի ներգրավման դեմ մարտնչելը կմղի մասնակիցներից շատերին ձուլվելու գերիշխող մշակույթին՝ ընդունելով նրանց արժեքներն ու ինքնությունը: Այս նոր գործիչները կարող են նույն աստիճանի հայկական ինքնություն չդրսևորել, ինչպես նրանց նախորդող սերունդները: Ինչպես նշվել է, այս ձուլված հայ անհատների համար գործնական ու համապատասխան պայմանների ստեղծման պատասխանատվությունը կրում են ավանդական հայկական գործիչները: Նրանք են կամուրջը դեպի Հայաստանի ու Ղարաբաղի ժողովուրդները:

Ինչպես արդեն նշվեց, վերոնշյալ դասերից յուրաքանչյուրում հաջողություններ են գրանցվել: Օտարազգի հասարակական կարծիք ստեղծողները պարբերաբար նշում են այսպես կոչված հայկական լոբբիի հզորության մասին: Այնուհանդերձ, պետք է նշել, որ ավելին պետք է արվեր և ավելի ձեռքբերումներ լինեին Հայաստանի ու Ղարաբաղի անկախության հաստատումից հետո: Օրինակ, պարզ է, որ առ այսօր մեր համատեղ քաղաքական ջանքերի արդյունքում քաղաքական նվաճումները զգալիորեն գերազանցում են տնտեսականը: Այս փաստաթղթում մենք մատնանշել ենք այն բազմաթիվ ոլորտները, որ նոր մոտեցումների, լրացուցիչ միջոցների և ավելի արդյունավետ գործունեության կարիք են զգում: Մենք չպետք է բավարարված լինենք մեր հակառակորդների կամ էլ չեզոք հասարակական կարծիք արտահայտողների կողմից շռայլվող գովասանքներով:

Ի լրումն մեկնաբանությունների մասում առաջարկված գործողությունների, կուզենայինք ձեր ուշադրությունը նաև հրավիրել առաջարկությունների բաժնի վրա:

VII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. *Ստեղծել միջոցների վերաբերյալ միասնական բազա*: Հայաստանն ու Ղարաբաղը պետք է ստեղծեն և տրամադրեն տեղեկություններ, որ օգտակար կլինեն միջազգային քարոզչական գործունեություն ծավալելիս, ներառյալ մանրամասն տեղեկություններ Հայաստանի ու Ղարաբաղի մասին, ինչպես նաև պաշտոնական տեսակետներ հիմնական հարցերի վերաբերյալ: Ի լրումն վերջինիս, Սփյուռքի քարոզչական կազմակերպությունները պետք է ստեղծեն և տեղեկություններ տրամադրեն յուրաքանչյուր երկրի կամ հաստատության քարոզչական միջավայրի մասին, ուր քարոզչություն պետք է իրականացվի: Քարոզչության հաջողությունը կախված է նրանից, թե հայտնի է արդյոք, ով է որոշում կայացնողը, ով ազդեցություն ունի որոշման կայացնողների վրա, և ում վրա կարելի է հույս դնել մեր օրակարգը քարոզելիս: Այդ տվյալները պետք է թարմացված լինեն, հեշտորեն հասանելի և անմիջապես օգտագործման ենթակա:

Բ. *Համատեղ քարոզչական օրակարգ:* Սփյուռքի, Հայաստանի ու Ղարաբաղի միջև ակտիվ խորհրդակցությունները պետք է ուղղված լինեն առաջնայնությունները հաղորդելուն, տեղեկատվությունը փոխանցելուն և համատեղ օրակարգ մշակելուն: Այս քննարկումները պետք է սահմանեն պետական, ակադեմիական շրջանակներում, վերլուծական կենտրոններում, ոչ կառավարական հաստատություններում, էթնիկ կազմակերպություններում, մամուլում և այլուր իրականացվելիք համատեղ նպատակները: Մամուլը հատուկ ուշադրության է արժանի: Պետք է քննարկվի նաև վարձու հասարակական հարաբերություններով զբաղվող ընկերությունների դերը ուսումնասիրելու հարցը:

Գ. *Սահմանել խորհրդակցությունների և համագործակցության առաջնայնությունները:* Մեր համատեղ օրակարգը իրականացնելու համար մեր սահմանափակ մարդկային ու նյութական միջոցները առավել արդյունավետությամբ օգտագործելու նպատակով կարևոր է, որ ջատագովների բոլոր և աճող շրջանակները կանոնավոր կերպով փոխանակեն իրենց ձեռքբերումները՝ քարոզչական տվյալներ, իրադարձությունների զարգացումների ժամանակին թարմացում և վերլուծություն, նախնական տեղեկացում և զեկույցներ քարոզչական ջանքերի ու դիվանագիտական նախաձեռնությունների (այդ թվում՝ այցելող պատվիրակությունների) մասին, առաջնայնությունների ու նպատակակետերի և համատեղ քարոզչական նպատակների համար կարևոր ցանկացած այլ տեղեկության մասին տեղեկացում: Գործողությունները պետք է համակարգվեն Հայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի ջատագովների կողմից՝ աշխատանքի բաժանումն իրականացնելով յուրաքանչյուրի կարողություններին համապատասխան: Նվազագույնը, պատասխանատու անձինք պետք է ճշտվեն ցանցի յուրաքանչյուր հանգուցակետում, որպեսզի բոլոր մասնակիցները ցանցն օգնագործեն արագորեն և արդյունավետորեն: Այնքանով, որքանով կիրառելի է, նախապես տեղեկացվածությունը զորացնում է բոլոր ջատագովներին: Սա հատկապես կարևոր է, քանի որ յուրաքանչյուր մասնակից կառավարություն կամ քարոզչական կազմակերպություն իր սեփական օրակարգն է ընդունում հաջորդ տարվա, կամ նպատակակետ կառավարության կամ հաստատության սպասվելիք քննարկումների շրջանի համար:

Դ. *Լայն մասնակցության ընդհանուր խթանում:* Միաժամանակ, մենք բոլորս պետք է միասին աշխատենք հզորացնելու գործող քարոզչական կազմակերպությունները, ընդլայնելու նրանց հասանելիությունը Սփյուռքի անհատների շրջանում և օգնելու նրանց ներգրավելու լրացուցիչ հայկական կազմակերպությունների: Հայաստանի ու Ղարաբաղի համապատասխան պաշտոնյաները պետք է փոխանցեն այն պատգամը, որ բոլոր սփյուռքյան կազմակերպությունները պետք է սերտորեն համագործակցեն այն կազմակերպությունների հետ, որոնց գործունեության առաջնային նպատակը քարոզչությունն է: Մեր խնդիրը պիտի լինի ստեղծել տեղեկացված ու ակտիվ հաստատությունների ու անհատների շարունակաբար աճող ցանց:

Այնուամենայնիվ, ջատագովները չպետք է անտեսեն աջակցության թեև նոր ծագող, բայց նշանակալից առանցքը՝ Հայաստանում ու Ղարաբաղում ստեղծվող տեղական ոչ կառավարական կազմակերպությունները: Իրենց պետություններում գործելու փորձի ավելացմանը զուգահեռ, այս ոչ կառավարական կազմակերպությունները նաև գործընկերներ են իրենց սահմաններում և դրանցից դուրս տարվող քարոզչական աշխատանքում: Իրենց սահմանների ներսում նրանց դերը կայանում է նրանում, որ աջակցեն և օրինականացնեն կառավարության վարած

քաղաքական այն գիծը, որին համամիտ են: Նրանք կարող են նույն նպատակին ծառայել՝ ընդհանուր օրակարգը քարոզելով Հայաստանում և Ղարաբաղում ներկա օտար դեսպանություններին ու այլ միջազգային ներկայացուցիչների: Իրենց սահմաններից դուրս, ոչ կառավարական կազմակերպությունները կարող են իրենց անդամներին ու երկիրը ներկայացնել ամենատարբեր ատյաններում՝ ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, և այլ տարածաշրջանային կառույցներում, որոնք հատկապես խրախուսում են ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությունը: Հայաստանի, Ղարաբաղի ու Սփյուռքի շահերից է բխում տեղական ոչ կառավարական կազմակերպություններին խրախուսելը , որպեսզի նրանք հնարավորին չափ արագ դառնան հնարավորին չափ արդյունավետ կազմակերպություններ: Կարճ ժամանակահատվածի համար, Հայաստանի ու Ղարաբաղի կառավարությունների համար հատկապես կարևոր է այս ոչ կառավարական կազմակերպությունների դերին ու նշանակությանը բացեիբաց աջակցելը: Սփյուռքի առավել հաստատուն ոչ կառավարական կազմակերությունների համար հայրենիքի ոչ կառավարական կազմակերպությունների հետ աշխատանքը և նրանց խթանումը պետք է դառնա իրենց հիմնական օրակարգի մասը:

Ե. *Ֆինանսավորում:* Հայաստանի, Ղարաբաղի ու Սփյոռքի հաստատությունները պետք է միասնաբար քննեն աճող քարոզչության համար ֆինանսական կարիքների հարցը: Սփյուռքի քարոզչության ազդեցությունն ավելացնելու վերոնշյալ ոչ մի առաջարկ հնարավոր չի լինի իրականացնել առանց զգալիորեն ավելի ֆինանսական միջոցներ տրամադրելու:

Զ. *Կառուցվածքը*: Ակնհայտ է, որ համաժողովի կազմակերպիչները մտադիր են առաջարկել համասփյուռքյան մի «հովանոցային» կառույց՝ փակելու համար հաղորդակցության և համակարգային ակնհայտ բացը, որ կա Սփյուռքի ներսում, Սփյուռքի ու Հայաստանի միջև և Սփյուռքի ու Ղարաբաղի միջև: Անկախ նրանից, թե այս մեծ նպատակը իրականություն կդառնա մոտ ապագայում, միջանկյալ քայլեր պետք է ձեռնարկել՝ քարոզչության նպատակայնությունն ու արդյունքներն ավելացնելու համար:

Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովը համընդհանուր քայլ է՝ կենտրոնացնելու մեր ընդհանուր ուշադրությունը և ջանքերը մի շարք փոխադարձորեն օգտակար համընդհանուր հարցերի շուրջ: Սա վերից վար ընթացող նախաձեռնություն է: Ի լրումն այս մոտեցման, առաջարկում ենք, որ քննարկվի հատուկ խորհրդակցությունների և կառույցների հարցը՝ առաջնային երկրներում, տարածաշրջանային ու միջազգային կառույցներում քարոզչության իրականացման պահանջներին անդրադառնալու համար: Յուրաքանչյուր կառավարություն կամ կառույց պահանջում է առանձին քարոզչության իրականացման ծրագիր, որը հաշվի կառնի տվյալ քարոզչական շրջանակների հնարավորություններն ու մոտեցումները և Հայաստանի ու Ղարաբաղի նպատակները: Նախօրոք իրականացված առերես խորհրդակցությունները՝ զուգորդված այս զեկույցում նշված հաղորդակցության ու համաձայնեցման կարգավորված համակարգով, պետք է ավելի մեծ արդյունքներ և արժեքավոր գաղափարներ տան համասփյուռքյան մոդելների ստեղծման շարունակական ջանքերի առումով:

Որևէ համահայկական քարոզչական կազմակերպության կամ համընդհանուր հովանոցային կառույցի բացակայության պայմաններում, Սփյուռքի քարոզչական կազմակերպություններն ընդունել են հիմնականում

Հայաստանի ու Ղարաբաղի առաջնայնություններն արտացոլող քարոզչական օրակարգ: Պարզ է, որ շատ քարոզչական կազմակերպություններ և համապատասխան պետական մարմիններ ուղիղ ֆինանսական կապեր են հաստատել միմյանց միջև: Թվում է նաև, որ պետական մարմինները մշտապես իրենց պատգամն են փոխանցել այս սփյուռքյան կազմակերպություններին, և վերջիններս բավականաչափ հմտորեն են հետևել Հայաստանի ու Ղարաբաղի իրադարձություններին ու կարիքներին: Մինչ այս ուղղակի հարաբերությունների գործընթացն անկասկած կշարունակվի, կարևոր է նաև, որ հաստատվի կանոնավորված, բազմակուսակցական հաղորդակցություն, խորհրդակցություններ և համագործակցություն՝ գիտակ և ներգրավված քարոզչական գործիչների աճող ցանցի ակնկալիքով: Սա հատկապես կարևոր է ընդհանուր քարոզչական օրակարգի առարկայի համար: Ինչպես արդեն նշվել է, յուրաքանչյուր պետություն կամ կառույց իր համար առանձին օրակարգ է ընտրում: Հաջորդ քայլը՝ համատեղ գնահատումը և ընդհանուր տարրերի առաջնայնության սահմանումը տեղի չի ունենում՝ վերոնշյալ ուղղակի հարաբերություններից դուրս:

Մենք առաջարկում ենք, որ բազմակուսակցական խորհրդակցություններ սկսվեն՝ ըստ առաջնայնության ընտրության: Յուրաքանչյուր քարոզչության առարկա երկրի, տարածաշրջանային կամ միջազգային կառույցի վերաբերյալ յուրաքանչյուր խորհրդակցություն պետք է ոչ միայն վերանայի ընդհանուր օրակարգի հարցերը, այլ և քննադատորեն գնահատի քարոզչության ենթակա կառույցի հետ Հայաստանի, Ղարաբաղի և քարոզչական կազմակերպության հարաբերությունների յուրաքանչյուր ասպեկտը, վերջինիս մասին եղած տեղեկությունները, և նրա վրա ազդեցություն գործելու կարողությունը: Ժամանակի ընթացքում, սահմանափակ քանակով սփյուռքյան քարոզչական կազմակերպությունների հետ գոյություն ունեցող ուղիղ հարաբերությունները կհավելվեն ավելի լայն ընդգրկում ու ազդեցություն ունեցող կանոնակարգված ու գործառնական հարաբերություններով:

2. Մեծ և գործուն սփյուռք ունեցող այլ պետությունների փորձը պետք է ուսումնասիրվի, որպեսզի վեր հանվեն գործող մոդելների բազմազանությունը: Արժեքավոր դասեր կարելի է քաղել վերլուծելով, թե Հունաստանը, Իռլանդիան, Իսրայելը, Լիբանանն ու այլոք ինչի են հասել իրենց սփյուռքերի հետ համակարգված քարոզչություն իրականացնելու գործում:

VIII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անկասկած, այսպես կոչված հայկական լոբբին արագ և արդյունավետ աճի շատ տեղ ունի: Կարելի է տեսնել մի այնպիսի քարոզչական ցանց, որ ունակ է ավելի մեծ արդյունք տալ ավելի սեղմ ժամկետներում՝ հանուն Հայաստանի ու Ղարաբաղի ժողովրդի: Սփյուռքով մեկ գործող հայկական ավելի հզոր լոբբիի առկայության դեպքում, Հայաստանի ու Ղարաբաղի իշխանությունները ավելի մեծ հնարավորություններ կունենան իրենց քաղաքացիների շահերը պաշտպանելիս: Միևնույն ժամանակ, այս հավելյալ հզորությունը կօգնի Սփյուռքի ջատագովներին ավելի լավ ծառայել Սփյուռքի տեղական համայնքների շահերին: Այս հեռանկարները իրականություն դարձնելու համար, ներկա բոլոր քարոզչական գործունեություն ծավալողները պետք է նոր պարտավորություններ ու պարտականություններ ստանձնեն: